



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՈՒ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ Ի ՊԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՍԻՐՏԸ ԿԸ ԲԱԲԱԽԷ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒ ԱՐՑԱԽԻ ԱՊՐԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԿՇՈՈՅԹՈՎ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Արցախի նախագահ Տիար Բազո Սահակեան, Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Ուաշինկթընի մօտ Արցախի մնայուն ներկայացուցիչը, պաշտօնատարներ ու «Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչներ Հինգաբքի, 18 Նոյեմբերին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ եղան Թեմիս Առաջնորդ Սրբազանին՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան հիւրերը, ներկայութեամբ մեր գաղութի հայկական կազմակերպութեանց եւ միութիւններու ներկայացուցիչներուն:

Այցելութիւնը տեղի կ'ունենար նախագահին Լոս Անճելըս այցին առիթով, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի յառաջիկայ թելեթոնի նախօրեակին:

Նախագահ Սահակեան, Պարգեւ Սրբազան եւ ընկերակիցները Ազգ. Առաջնորդարան ժամանեցին կեսօրուան ժամը 12ին. առաջին հերթին, անոնք Առաջնորդարանի հիւրասրահ-դահլիճին մէջ հանդիպում ունեցան Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգրիճեանի, Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներու եւ ներկայացուցչական հանգամանքով այլ ազգայիններու հետ: Առաջնորդ Սրբազանին ողջոյնի խօսքին ընդառաջելով, նախագահ Սահակեան, Պարգեւ Սրբազան եւ Հայաստանի գլխաւոր հիւպատոսը արտասանեցին ողջոյնի խօսքեր, գոհունակութիւն յայտնելով ընդունելութեան ու հայրենաշինական գործին մէջ ամերիկահայութեան ու առհասարակ Սփիւռքի գործակցական աջակցութեան համար:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանն ու յարգելի հիւրերը, իրենց ընկերակիցներուն հետ ուղղուեցան սրահ, ուր ճաշի սեղաններու շուրջ համախմբուած էին Ազգ. Առաջնորդարանի ընտանիքին ու հայկական միութեանց ներկայացուցիչները: Ներկայ էին Բ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի, ՀՕՄԻ, Հ.Մ.Ը.Մ.ի, Համազգայինի, Միացեալ Հայկական Հիմնադրամի, Թեմիս Ազգ.

Վարժարաններու Խնամակալ Մարմին, Ազգ. Առաջնորդարանի CASPS եւ Առաքելութեան Տարածման յանձնախումբերու, Հայ Կրթական Հիմնարկութեան, Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան, Իրանահայ, Նոր Ջուղայի Բարեկամներու, «Րաֆֆի» միութեանց եւ այլ միաւորներու ներկայացուցիչներ եւ Ազգ. Վարժարաններու տնօրէններ: Ներկայ էին նաեւ մեր եկեղեցիներու հովիւները, հոգաբարձութեանց ատենապետները եւ Կլէնտէյլի քաղաքապետ Տիար Արա Նաճարեան: Ճաշը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ յանձնախումբին կողմէ:

Ներկաները յոտնկայս ծափողջոյնով դիմաւորեցին հիւրերը: Առաջնորդ Սրբազանն ու Պարգեւ Սրբբազան կատարեցին սեղաններու օրհնութիւնը: Տիար Խաժակ Տիքիճեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն ու բոլոր ներկաներուն, վերահաստատեց հայութեան զօրակցութիւնն ու սրտակցութիւնը՝ մայր Հայաստանին ու Արցախին, եւ առաջարկեց խմել կենացը մեր հերոս ժողովուրդին, մաղթելով Արցախի ու հայութեան իրաւունքներուն իրականացումը:

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

Ճաշէն ետք, ու հանդիսավարութեամբ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեանի, արտասանուեցան սրտի խօսքեր:

Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան իր խօսքը սկսաւ ողջունելով հերոսական Արցախի ժողովուրդն ու անոր պետական ու հոգեւոր ներկայացուցիչները, վեր առաւ թելեթօնին կարեւորութիւնը եւ նշեց, որ անկկա Արցախին ու հայրենիքին զօրակցութեան գործնական արտայայտութիւն մըն է: Ան մաղթեց, որ Արցախի եւ ազգային այլ իրաւունքներ շուտով լուծումի հասնին, իսկ կանգ առնելով այս տարուան թելեթօնին նպատակին վրայ, ընդգծեց, որ ջուրի մատակարարման նուիրուած նուիրահաւաքը կենսական նշանակութիւն ունի, որովհետեւ ջուրը անհրաժեշտութիւն մըն է ու պետք է հասանելի ըլլայ բոլոր շրջաններուն, իւրաքանչիւր բնակիչի: Տիկին Պօղոսեան վեր առաւ նաեւ հայրենիքին ու Արցախին զօրակցութեան մէջ հայութեան միասնութիւնը եւ խնդրեց, որ հայութեան պատրաստակամութիւնը հաղորդուի Արցախի մեր ժողովուրդին:

Տիար Արա Նաճարեան իր կարգին վեր առաւ իրերայաջորդ թելեթօններուն կարեւորութիւնը, եւ անդրադառնալով այս տարուան նուիրահաւաքին նշանախօսքին, շեշտեց կեանքի համար ջուրին կարեւորութիւնը: Ան իր խօսքը եզրափակեց մաղթելով, որ Արցախը իր բարգաւաճումը ապրի ապահով ու ազատ մթնոլորտի մէջ:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Միացեալ Նահանգներու վարչութեան նախագահ Տիար Արա Ակիշեան յիշեցուց, որ ճիշդ շաբաթ մը ետք, թելեթօնը ընթացքի մէջ պիտի ըլլայ: Ան հաւաստեց, որ ճիգ չէ խնայուած, որպէսզի այս տարուան նուիրահաւաքը նախորդները գերազանցէ, կոչ ուղղեց բոլորանուեր մասնակցութեան եւ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին՝ այս հիւրընկալումին համար:

Հայաստանի գլխավոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան ողջունեց ներկաներն ու սփիւռքեան զօրակցութիւնը՝ Հայաստանին ու Արցախին, եւ յոյս յայտնեց, որ ի մօտոյ, հայկական երկրորդ հանրապետութեան՝ Արցախի ճանաչումը իրականանայ:

«ԳՈՐԾԵՆՔ ԽՈՅՏՄՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԽԻՉԱԽՈՒԹԵԱՄԲ»

Ողջոյնի խօսք արտասանեց Արցախի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան: Ան յիշեցուց, որ Արցախի ազատագրական շարժումը, որ ծայր տուաւ աւելի քան 20 տարի առաջ, ողջ հայութեան հոգիին արտայայտութիւնն էր, եւ իբրեւ արդիւնք մեր արդար պայքարին՝ Աստուած մեզի շնորհեց երկու հանրապետութիւն: Ան անդրադարձաւ թելեթոնի կարեւորութեան ու անոր ճամբով հայութեան ճիգերուն մէկտեղումին, ընդգծելով, որ սա մէկ բաժինն է մեր ազգի ճակատագիրի կերտումին, մանաւանդ, որ ամէն ազգ իր ճակատագիրը ինք է որ կը կերտէ: Ան մաղթեց, որ հայութիւնը, հետեւողական հետապնդումով ու պայքարով վերատիրանայ իր աստուածատուր բոլոր հողերուն, իրականացնելով մեր երազը, Յեղասպանութեան ճանաչումին կողքին, ամբողջական դառնայ Հայաստանը՝ Արցախով, Նախիջեւանով ու պատմական Հայաստանի բոլոր շրջաններով: Պարգեւ Սրբազանը շեշտեց, որ այս բոլորը անկարելի չեն, մանաւանդ եթէ յիշենք, որ աւելի քան 25 տարի առաջ, Խորհրդային Միութիւնը անխորտակելի կը նկատուէր, մինչդէռ այսօր, անկարելին իրականութիւն դարձած է ու անկէ ետք նոր պատմութիւն կերտուած: Ան իր խօսքը եզրափակեց շեշտելով, որ Աստուած կ'օգնէ հայութեան, եթէ մենք ըլլանք միասիրտ ու համախումբ, գործենք խիզախօրէն ու խոհեմութեամբ:

«ԱՅՈ ԸՍԵՆՔ ԿԵԱՆՔԻՆ»

Թեմիս Առաջնորդ Սրբազանը իր խօսքը սկսաւ ողջունելով ներկաները եւ մաղթեով, որ յառաջիկայ թելեթոնը յաջողութեամբ պսակուի, անոր բարձրացուցած նշանախօսքը՝ Ջուրը Կեանք է, կենսաւորուի Արցախի հայութեան կեանքին մէջ: Ան շեշտեց, որ թելեթոնին մասնակցելով, հայութիւնը այդ պիտի ըսէ կեանքին, որովհետեւ ջուրը ամէնէն կենսական նիւթն է կեանքի պահպանման համար:

Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ թելեթոնը սկիզբ առաւ Միացեալ Նահանգներէն ու տարուէ տարի ծաւալ ստացաւ դէպի հայկական գաղթօճախներ, իսկ վերջին տարիներուն արդէն կ'ընդգրկէ նաեւ հայրենիքն ու նոր գաղութներ. անիկա անհրաժեշտ է, որպէսզի Հայաստանն ու Արցախը հաստատուին ամուր հիմերու վրայ, եւ այս իմաստով, բարձր գնահատեց »Հայաստան« հիմնադրամին դերակատարութիւնն ու անոր լոսանճելըսեան միաւորի պատասխանատուներուն նուիրեալ աշխատանքը:

Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ արցախեան նորագոյն իրադարձութիւններուն ու զարգացումներուն: Ան նշեց, որ մէկ կողմէ, իբրեւ արդիւնք թափուած արիւնին ու քրտինքին, Արցախը կ'ապրի իր կեանքի զարգացումները, բայց նաեւ գիտենք, որ ամէն բան վարդագոյն չէ. թուրք-ազերիական ոտնձգութիւնները զոհեր, վիրաւորներ ու վնասներ կը

պատճառեն շրջանին ու ժողովուրդին, սակայն պետութիւնն ու զինեալ ուժերը ամբօրէն կառչած են հայրենի հողին ու տրամադիր չեն ընկրկում արձանագրելու: Ան վերահաստատեց, որ ողջ հայութիւնը կը կանգնի Արցախի ու իր դատին կողքին, անոր սիրտը կը բաբախէ հայրենի իրադարձութիւններու զարգացումներու կշռոյթով, իրաւունքներու պաշտպանութիւնն ու վերակերտումն ալ պիտի ընթանան միացեալ ճիգերով, միասնութեամբ:

«ՊԱՅԱՆՋՆԵՐՈՒՆ ՅԻՄՔԸ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Վերջին խօսքը արտասանեց Նախագահ Սահակեան: Ան առաջին հերթին անդրադարձաւ պայքարի ճամբուն վրայ կերտուած հանգրուաններուն, որոնց Նորագոյնը կ'ապրինք այսօր: Ան ընդգծեց, որ մեր պայքարի, պահանջներուն ու գործին հիմքը բարոյականութիւնն է, առանց որուն, ամէն բան կը մնայ խախտտ: Ան ըսաւ, որ հայութիւնը բարութեան խաչակիր է եղած ու պէտք է մնայ, եւ յիշեցուց, որ 20րդ դարու վերջին տարիներուն, Արցախի մէջ ծայր տուած պայքարը յաղթանակի հասաւ շնորհիւ հայութեան բոլորանուէր մասնակցութեան: Ան յատուկ գնահատանք արձանագրեց մեր քոյրերուն, որոնք կը ծառայեն Արցախի բանակին մէջ ու կ'աջակցին արցախեան կանքի տարբեր ոլորտներուն կենսագործման, մասնաւորելով ՅՕՄԻ ծառայութիւնները: Ան երախտագիտական արտայայտութիւն ունեցաւ Նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր Առաջնորդարաններուն դերակատարութեան մասին:

Ակնարկելով Արցախեան պայքարի առաջին հանգրուաններուն, Նախագահ Սահակեան նշեց, որ թրքական կողմին մօտ կար ցեղասպանութիւնը կրկնելու մտադրութիւն, սակայն Արցախը դիմացաւ ու պատուով պաշտպանեց իր իրաւունքները, որպէսզի չկրկնուին պատմութեան սեւ էջերը: Ան յայտարարեց, որ Արցախի այսօրուան 150,000 բնակիչներէն իւրաքանչիւրը մէկ զինուորն է Արցախի բանակին, որուն զօրավիգ են Յայաստանն ու Սփիւռքը, բարձրացնելով պաշտպանական ուժերուն թիւը: Նախագահը նաեւ յայտարարեց, որ Արցախի կառուցումը ու բոլոր տեսակի աշխատանքները կը կատարուին յարգալից մթնոլորտի մէջ, կեղծիքն ու շահամոլութիւնը վանելով՝ կ'ուղղուին դէպի յաջողութիւն: Իբրեւ արդիւնք այս մօտեցումին, Արցախի տնտեսութիւնը անցեալ տարի բարելաւում ապրած է 13 առ հարիւրով, եւ այդ՝ հակառակ աշխարհը կլանող տնտեսական ճգնաժամին:

Նախագահ Սահակեան իր խօսքը եզրափակեց շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան ու անկեղծ վերաբերմունքին համար, կոչ ուղղելով, որ յառաջիկայ թելեթօնը արձանագրէ Նոր Նուաճում, ի խնդիր արցախեան կենսական ծրագիրներու իրականացման:

Ընդունելութեան ատարտէն առաջ, Առաջնորդ Սրբազանը յարգելի հիւրերուն ու ընկերակիցներուն յանձնեց խորհրդանշական յուշանուէրներ: Յանդիպումը վերջ գտաւ «Պահպանիչ»ով ու «Կիլիկիա»ի խմբերգով:

PRESIDENT AND PRELATE OF ARTSAKH VISIT THE PRELACY

On Thursday, November 18th, 2010, President of Artsakh His Excellency Bako Sahakyan and Prelate of Artsakh H.E. Archbishop Barkev Martirosian paid an official visit to the Prelacy where they were met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and were later hosted to a luncheon at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. Consul General of Armenia the Honorable Grigor Hovanissian and NKR representative in Washington accompanied the honored guests, who are in Los Angeles for the upcoming annual Armenia Fund Telethon.

Upon their arrival, the President, Prelate, and delegation were escorted to the reception room where they had a private meeting with the Prelate, Central Executive member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Consul General and Deputy Consul General, and Armenia Fund Chair Mr. Ara Aghishian.

Following the meeting, the Prelate and guests headed to the hall for the luncheon, which was organized by the Prelacy Ladies Auxiliary. The Prelate and President were greeted with applause as they entered the hall. In attendance were representatives from the A.R.F. Central Committee, A.R.S., Homenetmen, Hamazkayin, United Armenian Fund, Glendale Mayor Ara Najarian, Pastors and Boards of Trustees Chairs of our Churches, Board of Regents of Prelacy Schools, CASPS, Prelacy Outreach Committee, Davidian and Mariamian Educational Foundation, Armenian Society of Los Angeles, Friends of New Julfa, Raffi Cultural Association, Prelacy Schools' Principals, and sponsors.

The two Prelates blessed the tables, after which Mr. Dikijian welcomed the guests and reaffirmed the support of the community to Armenia and Artsakh and raised a glass to the prosperity of both homelands.

After lunch, Master of Ceremonies Archpriest Fr. Vicken Vassilian invited Executive Council Chair Mrs. Rima Boghossian to deliver her remarks. After welcoming the guests, Mrs. Boghossian stressed the importance of the annual Armenia Fund Telethon and noted that the Telethon is a testament to the level of support of Armenians worldwide to Armenia and Artsakh. This year's Telethon is of significant importance as it will benefit water projects, said the Chairlady, and we all know how vital water is to our lives and how critical it is for everyone in Artsakh to have clean water resources. In conclusion, she asked the guests to convey to our brethren in Artsakh that the Armenian people as a whole are fully behind the people of Armenia and Artsakh and will lend any and all support for their well-being.

Also reflecting on the theme of this year's Telethon "Water is Life", Mayor Najarian also stressed the criticalness of providing this fundamental human need to the people of Artsakh, and wished safety and stability for the country.

Armenia Fund Chair Mr. Ara Aghishian reassured the guests that no effort or resource has been spared to ensure that this year's Telethon is the most successful to date, and called on the community to lend their support this year again.

Consul General Grigor Hovannisian expressed appreciation for the staunch support of the Diaspora, and expressed hope that Artsakh will be an independent country in the near future.

In his message, Archbishop Barkev Martirosian stated how the Artsakh's struggle for liberation, which began over twenty years ago, is a symbol of the spirit of the Armenian people. Speaking of how each country shapes its own destiny, he noted that the Armenia Fund Telethon is a step forward in shaping the destiny of Armenia and Artsakh. His Eminence expressed great hope that the Armenian people remain unwavering in our struggle to reclaim our rightful lands, obtain recognition of the Genocide, and become one nation again including Artsakh, Nakhichevan, and our historic lands. He said that this dream is not unrealistic, and gave the example of the USSR which twenty-five years ago seemed like an unbeatable force but today is long gone. He concluded by saying that God will bless and help the Armenian people if we work together in harmony and with courage and forethought.

Archbishop Moushegh Mardirossian began his message by wishing that the upcoming Telethon will be of unprecedented success, and stressing that by participating in this Telethon we are giving life to the people of Artsakh by providing them with water, one of life's most basic and vital needs. He stated that though the Telethon began in the United States, it quickly spread and saw the support of Armenian communities worldwide, and commended the Armenia Fund for their dedicated efforts. The Prelate also reflected on the realities of life in Artsakh today, noting that though the country has seen progress owing to the blood and sweat of its people, on the country is still subject to attacks; however, the government, the military, and the people are and ready to continue the struggle. In conclusion, he reaffirmed that the Armenian people stand behind Artsakh and are active participants in its progress and prosperity.

Finally, President Sahakyan was invited to deliver his message.

President Sahakyan reflected on the advancements the country has experienced as a result of the struggle for liberation, advancements which were brought about by the united support of Armenians worldwide. He specially commended the women of Artsakh who have contributed invaluablely to the development of the country through their service in the army, and through humanitarian organizations like the A.R.S. He also expressed gratitude for the ongoing support of the Catholicosate of Cilicia and the Western Prelacy. On the Artsakh struggle, President Sahakyan stated that despite the efforts of its enemies to repeat the atrocities of the Genocide, the country was able to defend itself and its rights and prevented history from being repeated. He also added that the rebuilding and advancement of Artsakh is a united effort, and it is for this reason that the economy grew by 13% last year when other countries experienced a decline in their economies. In conclusion, President Sahakyan conveyed thanks for the warm reception and expressed his wish that the upcoming Telethon would be the most successful yet.

Archbishop Mardirossian presented the President and Prelate of Artsakh with mementos, and the reception concluded with the Prelate's benediction and the singing of the Cilician anthem.